

Էդուարդ Կեսոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քանալի բառեր- ՀՕԿ-ի նպատակներ, դպրոցաշինություն, նյութական աջակցություն դպրոցներին և համալսարաններին, ՀՕԿ և մշակութային հիմնարկներ, ՀՕԿ և մշակութային անձինք, ՀՕԿ-ի տպագրական գործունեությունը:

ՀՕԿ-ի ծավալած գործունեությունը կրթական ոլորտում: Հայաստանի խորհրդայնացումից հետո երկիրը վերաշինելու և շենացնելու գործը ՀՍԽՀ առջև ծառայած առաջնահերթ խնդիրներից էր, որը մտահոգում էր մի շարք հայ հասարակական և մշակութային գործիչների: Այդ խնդրի լուծման ուղղությամբ նրանց կատարած փնտրտուքը հանգեցրեց օգնության կոմիտե ստեղծելու գաղափարին: Գաղափարը կենսագործելու համար 1921 թ. սեպտեմբերի 13-20-ը Երևանում հրավիրվեց ժողով, որը հիմք դրեց Հայաստանի օգնության կոմիտեի ստեղծմանը¹: Հիմնադիր ժողովին մասնակցում էին ինչպես ճանաչված մտավորականներ Հովհաննես Թումանյանը, Նար-Դոսր, Դերենիկ Դեմիրձյանը, Ռոմանոս Մելիքյանը և ուրիշներ, այնպես էլ հասարակական-քաղաքական գործիչներ, որոնց թվում կարելի է առանձնացնել Ս. Կասյանին, Ս. Տեր-Գաբրիելյանին, Ա. Բեկգադյանին, Ս. Մարտիրոսյանին: Հայաստանի օգնության կոմիտե ստեղծելու գաղափարը հավանության արժանացավ նաև իշխանության շրջանակներում, և 1921 թ. սեպտեմբերի 28-ին ՀՍԽՀ ժողովխորհի կողմից ընդունված դեկրետով ամրագրվեց ՀՕԿ-ի հիմնադրումը, ինչպես նաև նրա գործունեության շրջանակները հստակեցնող կանոնադրությունը²:

Կանոնադրությունում որպես ՀՕԿ-ի գլխավոր նպատակ ամրագրվում է «օգնության հասնել Հայաստանի սովետական ազգաբնակչության», իսկ շինարարական աշխատանքներով զբաղվելը մղվում է հետին պլան³: Սակայն շուտով իրական կյանքում գործադրվող այս առաջնահերթությունները ենթարկվում են դերափոխման: Հարցը քննվում է 1922 թ. հուլիսին Երևանում գումարված ՀՕԿ-ի համագումարում, և ընդունվում է որոշում, համաձայն որի՝ «վերջ պետք է տրվեր սպառողական մեթոդներին յեվ զարկ տային Հայաստանի կուլտուր-կրթական ձեռնարկներին»⁴: Այս որոշման համաձայն՝ մշակվում և նույն համագումարի կողմից 1922 թ. հուլիսի 25-ին հաստատվում է ՀՕԿ-ի նոր կանոնադրությունը, որի հենց առաջին հոդվածով ամրագրվում էր. «Հայաստանի ոգնության կոմիտեի նպատակն է առաջին՝ աջակցել յերկրի ընդհանուր տնտեսական յեվ կուլտուրական շինարարության, յերկրորդ՝ ոգնել Հայաստանի ազգաբնակչության սովի ու այլ աղետների դեպքերում յեվ մաքարել նրա հետևանքների դեմ»⁵: Կանոնադրությունների զուգադրումից պարզ է դառնում, որ այսուհետ ՀՕԿ-ի գործունեությունն ուղղվելու էր հիմնականում երկրի շինարարությանը նպաստելուն: Սակայն այս անցումը տեղի չի ունեցել անմիջապես, այլ առաջիկա տարվա ընթացքում ՀՕԿ-ը շարունակում էր գործել «սպառողական մեթոդների» գործադրմամբ:

Վերջին կանոնադրությունը գծում էր այն շրջանակները, որոնցում պետք է ծավալվեր ՀՕԿ-ի կրթամշակութային գործունեությունը: «Յերկրի կուլտուրական շինարարությանը զարկ տալու նպատակով Հ.Ռ.Կոմիտեն՝

ա. Նպաստում է ժողովրդական դպրոցներին. աջակցելով եղածների պահպանման, նորերի բացման, կառուցանելով և վերանորոգելով դպրոցական շենքերը, մատակարարելով դպրոցական պիտույքներ, գործիքներ, դասարանական պարագաներ յեվ առարկաններ:

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 178, ց. 1, գ. 2, թ. 21-26:

² Տե՛ս «ՀՍԽՀ դեկրետների եւ որոշումների հավաքածու», № 9,5 հոկտեմբեր 1921, էջ 71:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 5, թ. 1:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 1:

⁵ Նույն տեղում, գ. 33, թ. 32:

բ. Ոժանդակում ե կուլտուրական, հանրային հիմնարկություններին, ժողովրդական տներին, գրադարան-ընթերցարաններին, գյուղական, գավառական թատրոններին այլ եվ Հայաստանի ժողովրդական համալսարանին, Հանրային գրադարանին, Հայաստանի գիտական ինստիտուտին, ազգային թանգարանին, գեղարվեստական ստուտիաներին յեվ այլն:

գ. Հոգում ե հրատարակչական գործի զարգացման:

դ. Հիմնում ե հատուկ ֆոնդեր, յերկրի կուլտուրական աշխատավորների, գեղարվեստագետների, գիտնականների յեվ այլոց վիճակը բարելավելու համար»¹:

Գործունեության այս ոլորտները վերամտարգրվեցին 1924 թ. հունվարի 11-ին ընդունված ՀՕԿ-ի նոր կանոնադրությամբ և պահպանվեցին վերջինիս գոյության ողջ ընթացքում: Նախապես նշեմ, որ ՀՕԿ-ը իրականում գործունեություն է ծավալել վերը նշված բոլոր ոլորտներում, իհարկե, տարբեր ժամանակահատվածներում առավելություն տալով այս կամ այն ոլորտին:

ՀՕԿ-ը ակտիվ գործունեություն է ծավալել դպրոցաշինության ոլորտում: Ընդ որում՝ այդ գործունեությունը ընդգրկել է ինչպես առաջին անհրաժեշտության կարիքները հոգալու համար դպրոցներին տրամադրված դրամական և առհասարակ նյութական օժանդակության, այնպես էլ դպրոցական շենքերը վերանորոգելու և նորերը կառուցելու ոլորտները (այդ դպրոցները եղել են թե՛ հանրակրթական բնույթի, թե՛ մասնագիտական ուղղվածություն ունեցող): ՀՕԿ-ի Գլխավոր վարչության 1922-1923 թթ. տարեկան տեղեկագրում կարդում ենք, որ այդ ընթացքում հագուստի և գրենական պիտույքների տեսքով պարբերաբար օգնություն է տրամադրվել Աշտարակի և Օշականի պետական դպրոցներին: Էջմիածնի Կոչ գյուղի դպրոցի շենքի կառուցման օժանդակելու համար տրամադրվել է 300 ռ. արժողությամբ հագուստ ²: Նշենք, որ ՀՕԿ-ը, փաստացիորեն չընդունելով Ղարաբաղը Ադրբեջանի կազմում թողնելու ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի ապօրինի որոշումը, պահպանել էր կապը նրա հետ և Հայաստանի քաղաքների ու գավառների դպրոցներին ցուցաբերվող օգնության նմանությամբ օգնություն էր տրամադրվում նաև Ղարաբաղի դպրոցներին: 1922 թ. նոյեմբերի 10-ին կայացած ՀՕԿ-ի Գլխավոր վարչության ժողովի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Ղարաբաղի շրջանի դպրոցների կարիքները բավարարելու համար տրամադրվել են հազարավոր գրենական պիտույքներ³: Վերջինիս հետ կապված հետաքրքիր դեպք է տեղի ունեցել 1926 թ.: Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Թաղասեռ գյուղի լիազոր Սիմոն Հովսեփյանը դիմում է հղել ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանը, որտեղ նշում է, որ գյուղի բնակիչները սեփական ջանքերով ձեռնարկել են դպրոց-ակումբի սեփական շենքի կառուցումը և բավականին աշխատանք են կատարել այդ ուղղությամբ, սակայն նյութական միջոցները բավարար չեն գործը ավարտին հասցնելու համար և խնդրում է նյութական օգնություն տրամադրել⁴:

1922 թ. սեպտեմբերի 1-ին Հայաստանի դպրոցներին գրենական պիտույքներ տալու խնդրանքով ՀՕԿ-ին է դիմում ՀՍԽՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատը: Հարցը նույն օրը քննելով՝ ՀՕԿ-ը որոշում է կայացնում այդ նպատակի իրականացման համար լուսավորության ժողովրդատին տրամադրել գրենական պիտույքներ՝ իրենց արժեքից բավականին գեղջված գներով⁵:

ՀՕԿ-ը միջոցներ հատկացրեց Հրազդանի շրջանի դպրոցական շենքերի վերանորոգման համար: 1922 թ. օգոստոսի 17-ին Երևանի քաղաքային-գավառային լուսավորության բաժինը ՀՕԿ-ի նախագահությանն է փոխանցում Հրազդանի շրջանի լուսբաժնի վարիչի ներկայացրած Իմանդալու և Ուլուխանլու գյուղերի դպրոցների շենքերի վերանորոգման ծախսերի նախահաշիվը և խնդրում այդ նպատակով տրամադրել 1816

¹ Նույն տեղում, թ. 32-32 շրջերես:

² Տե՛ս նույն տեղում, գ. 9, թ. 2 շրջերես:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 35, թ. 29:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 146, թ. 16:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 5 շրջերես:

ռ.: Խնդրանքի բավարարման շնորհիվ վերանորոգման են ենթարկվում նշված գյուղերի դպրոցները¹:

Դպրոցաշինության առաջին աշխատանքները տեղի ունեցան Էջմիածնի և Լենինականի գավառներում: Սա հիմնականում պայմանավորված էր այն հանգամանքով, որ Արևմտյան Հայաստանից գաղթած սասունցիները, որոնց շրջանում գրագիտության աստիճանը առավել ցածր մակարդակի վրա էր, հիմնականում բնակություն էին հաստատել այդ տարածքներում: Նշված գավառներում, հատկապես Արագածի ստորոտում գտնվող շրջաններում դպրոցներ կառուցելու համար գումար էր տրամադրվել Փարիզի Չմշկածագցիների ուսումնասիրաց ընկերության և Երվանդ Հակոբյանի կտակով հատկացված միջոցներից: Այս շրջանում առաջինը աշխատանքներ են կատարվում Ագարակ գյուղի դպրոցի շենքի վերակառուցման ուղղությամբ: Շինարարությունը կազմակերպելու համար 1926 թ. հունիսի 10-ին ՀՕԿ-ը Էջմիածնի գավառային գործադիր կոմիտեին է փոխանցում անհրաժեշտ գումար և շինարարական նյութեր²: Շինարարական աշխատանքները ձգձգվում են շուրջ երկու տարի: 1927 թ. փետրվարի 17-ին Էջմիածնի գավառի գործադիր կոմիտեին է ուղարկում ՀՕԿ-ին, որում ասվում է. «Ինչ վերաբերում է անցյալ տարվա Ձեր տրամադրած 1016 ռ. 50 կոպ. դրամին և 58 ռ. 25 կոպ. շինվածանյութին, հայտնում յենք, վոր թե դրամը և թե շինվածանյութը ծախսվում է Ագարակի դպրոցի վրա, վորի համար բաժինս հայտնում ե իր շնարհակալությունը»³:

Դպրոցական նոր շենքեր կառուցվեցին Լենինականի գավառի Բլխեր և Շիրաղալա գյուղերում, որտեղ ևս սասունցիները բնակություն էին հաստատել: Այդ նպատակի իրագործման համար 1927 թ. օգոստոսի 11-ին և 27-ին Երվանդ Հակոբյանի կտակով տրամադրված միջոցներից ՀՕԿ-ը բաց է թողնում 2500 ռ.: Դպրոցների համար կազմվում են հատակագծեր, և ջանքեր գործադրվում շինարարական աշխատանքները սկսելու համար. աշխատանքները տևում են շուրջ մեկ տարի: 1928 թ. հուլիսի 9-ին Էջմիածնի գավառի գործադիր կոմիտեին է ուղարկում ՀՕԿ-ի Կենտրոնական վարչությանը, որով հայտնում է, որ «Փարիզի Չմշկածակցիների յեվ Յերվանդ Հակոբյանի կտակով մեզ հանձնված գումարները Ագարակում, Շիրաղալայում յեվ Բլխերում դպրոցական շենքեր կառուցելու համար գործադրված են իրենց նպատակին: Ներկայումս այս շենքերը բոլորովին ավարտված են...»⁴:

Երվանդ Հակոբյանի կտակի միջոցներով 1930թ. կառուցվում և ավարտվում է նրա անվամբ դպրոց նաև Դավլոթի գյուղում⁵:

1927 թ. Լենինականի գավառի Աշնակ գյուղում ՀՕԿ-ի ջանքերով կառուցվում է Գայանե Նշիկյանի անվան դպրոցը: Ապրիլին Ֆրեզնոյի բնակիչ Հակոբ Նշիկյանը ՀՕԿ-ին 2060 ռուբլի է փոխանցվում՝ Հայաստանում իր կնոջ՝ Գայանեի անունով դպրոց կառուցելու համար⁶: Դպրոցի կառուցումը նախատեսվում էր ավարտել 1928-1929 ուստարվա սկզբին, սակայն այն ձգձգվեց և ավարտվեց միայն հաջորդ տարում:

1920-ական թթ. երկրորդ կեսից ՀՕԿ-ը ձեռնամուխ է լինում նոր ավանների կառուցմանը, որոնց համար ՀՕԿ-ին միջոցներ էին տրամադրում արտասահմանյան համանուն հայրենակցական միությունները: Նոր ավանների հիմնադրումը և բնակեցումը, բնականաբար, ենթադրում էր նաև կրթական գործի կազմակերպում այդ վայրերում: Այս նպատակի իրագործման համար սկսվում են դպրոցաշինական աշխատանքներ: 1934 թ. հուլիսի 4-ին ՀՕԿ-ի Կենտրոնական վարչության նախագահ Գր. Վարդանյանը ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին է ներկայացնում 1927-1934 թթ. ընթացքում կատարած և ապագայի համար ծրագրված շինարարական աշխատանքների հաշվետվություն, որից պարզ է դառնում, որ դպրոց-

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 39, թ. 5-5 շրջերես:

² Տե՛ս նույն տեղում, գ. 779, թ. 13:

³ Նույն տեղում, գ. 156, թ. 9:

⁴ Նույն տեղում, գ. 779, թ. 33:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 920, թ. 60:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 9:

ներ են կառուցվել Նոր Արաբկիրում, Նոր Մալաթիայում, Նոր Սեբաստիայում և այլանաձևերով և 10-ամյա դպրոցներ կառուցել Նոր Խարբերդում ու Նոր Սեբաստիայում¹: Վերջիններիս շինարարական աշխատանքները շարունակվում և ավարտվում են հաջորդ տարում: Դպրոց է կառուցվում նաև Նուբարաշենում²:

1935 թ. դպրոցաշինական աշխատանքներ են կատարվում նաև Նոր Բուրճանիայում: Կառուցվում է 1600 աշակերտների համար նախատեսված մի մեծ դպրոց: Համաձայն 1935 թ. դեկտեմբերի 16-ին կայացած Նոր Բյուրճանիայի շինկոմիտեի վարչության նիստի որոշման՝ «Շնորհիվ կուլտուրական լավ սպասարկության, Նոր Բյուրճանիայում չկա մի յերեխա, վոր դպրոցից դուրս մնացած լինի. փոքրահասակների մեծ մասը տեղավորված են մանկապարտեզներում»³:

ՀՕԿ-ի ձեռնարկումներով Հայաստանում կառուցվում են նաև մասնագիտական դպրոցներ, որոնք հիմնականում մեղվաբուծական բնույթի էին: Դա ուներ իր օբյեկտիվ պատճառները. Հայաստանի բնակլիմայական պայմանները և մեղուների տեսակները նպաստավոր պայմաններ էին ստեղծում այս ոլորտում արդյունավետ ձեռնարկումներ իրականացնելու համար:

Այս ուղղությամբ առաջին քայլը կատարեց վիեննաբնակ Աբրահամ Բոյաջյանը: Ավստրիայի մեղվաբուծական միության փոխնախագահ Վ. Շմիդտի ցուցումով Ա. Բոյաջյանը առաջարկ է ներկայացնում ՀՕԿ-ին Հայաստանում մեղվաբուծական դպրոց բաց անելու առնչությամբ: Դպրոցի շենքի կառուցման և կահավորման ծախսերը ամբողջությամբ հոգալու էր ինքը պայմանով, որ այն պետք է կրի իր անունը: Գործի կազմակերպման ուղղությամբ բանակցություններ վարելու համար Հայաստան է գործուղվում Զուրաբյանը⁴: 1923 թ. դեկտեմբերի 11-ին ՀՕԿ-ի կենտրոնական վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի խառը նիստը քննում է առաջարկը և արժանացնում հավանության, ապա դիմում է Հողժողկոմատին՝ ծրագիր կազմելու խնդրանքով⁵: Որոշվում է դպրոցը կառուցել Լոռու շրջանում՝ Ստեփանավանում: Շինարարական աշխատանքներն ավարտվում են 1926 թ. կեսերին: Դպրոցը գինվում է Վիեննայից բերված համապատասխան մեքենաներով, տրավադրվում է մեծաքանակ գրականություն⁶:

Հայաստանում մեղվաբուծական մեկ այլ դպրոց կառուցվեց Խերյանի կտակով տրամադրված միջոցներով: Դպրոցի կառուցման համար վայր է ընտրվում Թալին քաղաքը: 1927-1928 թթ. ՀՕԿ-ի և լուսժողկոմատի միջև տեղի ունեցած գրագրության արդյունքում ձեռք է բերվում համաձայնություն շինարարական աշխատանքների վերաբերյալ, և 1928 թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին ՀՕԿ-ը լուսժողկոմատին է տրամադրում կտակի ամբողջ գումարը՝ 25000 ռ.՝ շինարարական աշխատանքներ ծավալելու համար⁷: Որոշ ձգձգումներից հետո շինարարական աշխատանքները ավարտվում են 1930 թ., և դպրոցի շենքը հանձնվում է շահագործման: Ընդհանուր առմամբ, դպրոցի վրա ծախսվում է ավելի քան 52000 ռ. գումար⁸:

1937 թ. հուլիսի 7-ին Արաբկիր հայրենակցական միության ներկայացուցիչը դիմում է ՀՕԿ-ին՝ թույլտվություն խնդրելով Նոր Արաբկիրի դպրոցի քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաների համար անհրաժեշտ գործիքներ և պիոներական ակումբի համար փողային նվազախմբի գործիքների հավաքածու բերելու համար: ՀՕԿ-ի ջանքերով ձեռք է բերվում համապատասխան թույլտվությունը, և գործիքները փոխադրվում են Հայաստան ու հատկացվում դպրոցին ու ակումբին⁹:

ՀՕԿ-ը զանազան նպատակների կենսագործման համար դրամական օժանդակություն է ցուցաբերել տարբեր ուղղվածություններ ունեցող դպրոցների: 1924 թ. գե-

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 822, թ. 11-12:

² Տե՛ս նույն տեղում, գ. 829, թ. 178:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 815, թ. 2:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 92, թ. 7:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 81, թ. 10 շրջերես:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 92, 15:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 779, թ. 42:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 920, թ. 59:

⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 288, թ. 1:

ղարվեստական դպրոցի կահավորման համար որպես նպաստ տրամադրվում է 200 ռ. և ռազմաքաղաքական դպրոցին՝ 250 ռ.՝ ֆիզկուլտուրայի կարիքները հոգալու համար¹: Հաջորդ տարի հրամանատարական դպրոցին որպես օգնություն կուրսանտներին տրամադրվում է 250 ռ.²:

ՀՕԿ-ը օգնություն է ցուցաբերել նաև կարիքավոր ուսուցիչներին, աշակերտներին և ուսանողներին: 1927 թ. լուսժողկոմատը դիմում է ներկայացնում ՀՕԿ-ի Կենտրոնական վարչությանը՝ հիվանդ աշակերտներին առողջարան ուղարկելու նպատակով օգնություն տրամադրելու խնդրանքով: Հարցը քննվում է Կենտրոնական վարչության նախագահության հունիսի 21-ի նիստում, և որոշվում այդ նպատակի կենսագործման համար միանվագ հատկացնել 90 ռ.³:

Գրագիտությունը ոչ միայն երեխաների, այլև մեծահասակների շրջանում տարածելու նպատակով ՀՕԿ-ը զբաղվել է նաև խրճիթ-ընթերցարանների և ակումբների կառուցմամբ ու կահավորմամբ, որոնց տրամադրվում էր նաև մեծաքանակ գրականություն: 1927 թ. հոկտեմբերի 7-ին ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահությունը որոշում է կայացնում Հոկտեմբերյան հեղափոխության 10-ամյակի առթիվ կառուցելու խրճիթ-ընթերցարաններ Արագածի լանջերում, որի համար հատկացվում է 2000 ռ.⁴: Երկու խրճիթ-ընթերցարաններ են կառուցվում նաև Գ. Նշիկյանի կտակով սահմանված միջոցներով⁵: ՀՕԿ-ը մշակութային ակումբներ է հիմնադրել Նոր Արաբկիրում, Նոր Խարբերդում, Նոր Մալաթիայում⁶, Նոր Եվդոկիայում⁷ և զանազան այլ վայրերում:

Դպրոցաշինության ոլորտում նկատվում էին ինչպես նշանակալի հաջողություններ, այնպես էլ խոչընդոտող հանգամանքներ: Նախ՝ բնական է, որ դպրոցը առաջին կարևոր օղակն է անգրագիտության դեմ պայքարելու խնդրում (այդ ժամանակ բնակչության ճնշող մեծամասնությունը անգրագետ էր), որում ՀՕԿ-ի դերակատարումը էական է եղել: Այս կարևոր է այն, որ դպրոցաշինության նպատակով Հայաստան էին փոխադրվում սփյուռքահայության դրամական և նյութական միջոցներ, որոնք հիմք էին ստեղծում շինարարական աշխատանքներ ծավալելու և երկիրը շենացնելու համար: Շինարարական աշխատանքների կազմակերպման գործում կար դրվատելի համերաշխություն և համագործակցություն հասարական-քաղաքական տարբեր խավերի ու հիմնարկների միջև: Դպրոցներ են կառուցվել սփյուռքահայության, տեղաբնիկների, ՀՕԿ-ի, ժողկոմատների, տարբեր քաղաքային ու գավառային գործկոմների, կոլխոզների և այլ մարմինների համագործակցության շնորհիվ: 1924 թ. Թիֆլիսում բնակվող Լոռու գավառի Գյար-գյար գյուղի նախկին բնակիչները գրություն են ուղարկում ՀՕԿ-ին և առաջարկում իրենց աջակցությունը: «Մենք քաղաքում ապրող գյուղացի բանվորներս գիտենալով գյուղի սուղ միջոցները և մտնելով աղքատ ու քայքայված գյուղացիների դրության մեջ, մենք էլ մեր կողմից իբրև բանվորներ,- գրված է գյարգյարցիների խնդրագրում,- ուզում ենք օրինական ձանապարհով որոշ չափով օգնել, որքան մեր սուղ ուժերը կներեն: Սրանով դիմելով ՀՕԿ-ին խնդրում ենք թույլ տալ այս հողի շուրջ ժողով գումարել և մեր ուժերի չափ օգնել»⁸:

Կային նաև խոչընդոտող և նույնիսկ արատավոր երևույթներ: Դպրոցաշինությունը հաճախ ընթանում էր դանդաղ տեմպերով: Սա պայմանավորված էր մի կողմից դրամական միջոցների փոխանցումների հետ կապված խնդիրներով, դրամները Հայաստան էին հասնում բավականին ուշացումով, Հայաստանում տեղաշարժը ևս դժվարությունների էր հանդիպում, մյուս կողմից՝ միջոցների ոչ նպատակային օգտագործմամբ: Նման օրինակ է Շիրաղալա և Բլխեր գյուղերի դպրոցական շենքերի կառուցման դեպ-

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 81, թ. 22 և 26 շրջերես:

² Տե՛ս նույն տեղում, գ. 91, թ. 3:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 149, թ. 17:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 24:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 165, թ. 8:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 822, թ. 11:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 808, թ. 13:

⁸ Նույն տեղում, գ. 768, թ. 6-6 շրջերես:

քը, երբ այդ նպատակով փոխանցված գումարները օգտագործվել էին մանկապարտեզ կառուցելու համար, որի պատճառով դպրոցների կառուցումը ձգձգվեց¹:

Խնդիրներ էին առաջանում կապված շինանյութի քանակի պակասության հետ: 1934 թ. հոկտեմբերի 13-ին ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ Գ. Վարդանյանի՝ ժողովմտորհի նախագահին ուղղված գրության մեջ նշվում է. «Հայրենակցականների կառուցողական աշխատանքները շինանյութի պակասության պատճառով գրեթե ամենուրեք կանգ են առել»²:

Դպրոցներին օժանդակելու գործում ՀՕԿ-ը երբեմն բախվում էր ֆինանսական անբավարարության խնդրին: 1922 թ. օգոստոսի 9-ին Երևանի գավառոժկոմի լուսբաժինը դիմում է հղում ՀՕԿ-ի նախագահությանը՝ խնդրելով իր վրա վերցնել Երևան քաղաքի երկրորդ աստիճանի դպրոցներից մեկի խնամակալությունը: ՀՕԿ-ը մերժում է խնդրանքը՝ ֆինանսական բավարար միջոցներ չունենալու պատճառաբանությամբ³:

Արատավոր երևույթ էր այն, որ որոշ անձինք ներգաղթյալների շրջանում քարոզչություն էին տանում դպրոցահասակ երեխաներին դպրոց չուղարկելու ուղղությամբ: 1932 թ. հունիսի 5-ին ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը բողոք է ներկայացնում ուստիկանապետ Ս. Խաչատրյանին՝ պնդելով, որ Ս. Պալյանը ընկերների հետ հակադպրոցական քարոզչությամբ է զբաղված Նոր Սեբաստիա ավանում⁴:

Իր գոյության վերջին շրջանում ՀՕԿ-ը կարծես անուշադրության էր մատնել դպրոցաշինական աշխատանքները, և այդ նպատակով փոխանցված կտակադրամներն ու մյուս միջոցները չէին գործադրվում: 1936 թ. հունվարի դրությամբ փոխանցվել էին Մինաս Չերազի ֆոնդը՝ Նուբարաշենում դպրոց-արհեստանոց կառուցելու համար, Հակոբյանի ֆոնդը՝ Մարտունիում դպրոց կառուցելու համար, Տիգրանակերտցիներ հայրենակցական միության տրամադրած միջոցները՝ Տիգրանակերտում դպրոց կառուցելու համար: Վերջիններից շինարարական աշխատանքներ կատարվել էին միայն Մարտունու դպրոցի կառուցման ուղղությամբ⁵:

ՀՕԿ-ի ուշադրության շրջանակներում են եղել նաև մինչդպրոցահասակ երեխաների զբաղմունքի և կրթության հարցերը: 1920-ական թթ. սկզբին հագուստի և սննդամթերքի տեսքով օժանդակություն է ցուցաբերվել բազմաթիվ մանկապարտեզների և մսուրների: Հետագայում կառուցվել ու կահավորվել են մանկապարտեզների նոր շենքեր ինչպես Երևանում, այնպես էլ Հայաստանի այլ շրջաններում: Միաժամանակ նրանց տրվել է ֆինանսավորում՝ անհրաժեշտ կարիքները հոգալու համար:

ՀՕԿ-ը էական օգնություն է ցուցաբերել նաև Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններին, հատկապես Երևանի պետական համալսարանին: 1923 թ. ՀՕԿ-ի Ադրբեջանի մասնաճյուղը Երևանի համալսարանին է ուղարկում 36 անուն՝ ավելի քան 180 միավոր տեխնիկական գործիքներ և պարագաներ: Դրանք գնվել էին ինչպես ՀՕԿ-ի միջոցներով, այնպես էլ տրամադրվել էին նվիրատուների կողմից⁶:

Նույն թվականին ՀՕԿ-ի Թավրիզի կոմիտեն կենտրոնական վարչությանն է ուղարկում 2700 դրան գումար՝ հանձնելու Երևանի համալսարանի ուսանողական հանրակացարանի վարչությանը: Ցանկությունը հարգվում է, և գումարը տրամադրվում է վերջինիս⁷: Հաջորդ տարի հանրակացարանի կարիքների հոգաժության համար ՀՕԿ-ի կողմից տրամադրվում է 100 ռ., և առանձնացվում ևս 1000 ռ. համալսարանի «եռամյակի տոնակատարությանը» մասնակցելու համար⁸:

1926 թ. նամակագրական կապ է հաստատվում Փարիզի հայ կրթական հիմնարկության և ՀՕԿ-ի պատվիրակության անդամ Կարեն Միքայելյանի միջև՝ Խրիմյան Հայրիկի ֆոնդի գործադրման հարցի շուրջ: Նախատեսվում էր ֆոնդի հաշվին կա՛մ

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 779, թ. 31:

² Նույն տեղում, գ. 816, թ. 10:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 39, թ. 11:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 801, թ. 4:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 254, թ. 3-4:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 47, թ. 33:

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 55:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 81, թ. 13 շրջերես և 19:

Հայաստանում կառուցել մեղվաբուծական կամ գյուղատնտեսական դպրոց, կա՛մ գումարը պետք է հատկացվեր համալսարանին՝ գյուղատնտեսական մասնագիտության մեջ խորանալու համար արտասահման ուսանողներ ուղարկելու և համալսարանի երաժշտական բաժնի կողմից պատրաստված ժողովրդական երգերի հավաքածուի հրատարակման համար: Ավելի քան մեկ տարվա քննարկումներից հետո որոշվում է ֆոնդը տրամադրել համալսարանին¹:

Երևանի պետական համալսարանին օգնություն է տրամադրվել նաև հետագա տարիներին: 1936 թ. ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը որոշում է կայացնում Նյու-Յորքից ստացված մեկ արկղ օպտիկական գործիքները պետհամալսարանին հանձնելու վերաբերյալ²:

Տեխնիկական սարքերի տեսքով 1935 թ. օգնություն է տրամադրվել նաև գյուղատնտեսական ինստիտուտին: Վերջինիս են փոխանցվում Ամերիկայից բերված միկրոսկոպները³:

Այսպիսով՝ ՀՕԿ-ը գործունեություն է ծավալել Հայաստանի կրթական ոլորտի տարբեր բնագավառներում և զգալի նպաստ ունեցել դրանց զարգացման համար:

ՀՕԿ-ի գործունեությունը մշակութային ոլորտում: Հայաստանի օգնության կոմիտեն օգնություն է ցուցաբերել զանազան մշակութային հիմնարկների՝ հանրային գրադարանին, թատրոնին, կոնսերվատորիային, թանգարանին, նաև մշակութային ոլորտում գործունեություն ծավալած գործիչների:

Խորհրդային Հայաստանի գոյության առաջին տարիներին անմխիթար վիճակում էր գտնվում հանրային գրադարանը, չկային գրքերի դասավորման, պահպանման ու օգտագործման համար անհրաժեշտ պայմաններ: Գրադարանի այս վիճակի մասին 1922 թ. օգոստոսին հանրային գրադարանի վարիչ Ե. Թադիանոսյանը գրում է ՀՕԿ-ին. «Հանրային գրադարանում ոչ մի աշխատանք չէր կատարվում շինութեան անաւարտ լինելու և դարակներ ու պահարաններ չլինելու պատճառով:

Բազմաթիւ միլիարդների արժողութիւն ունեցող գրքեր մնում էին արկղների մեջ չբացուած կամ թափթփած յատակի վրա»⁴: Գրքերը ոչնչացումից փրկելու և գրադարանին կյանք տալու համար նրան նյութական օժանդակություն է ցուցաբերում ՀՕԿ-ը: Մի քանի տարվա ընթացքում հանրային գրադարանին է փոխանցվում ավելի քան 7000 ռ. ոսկով, որի շնորհիվ «հոգացվել է գրադարանի կանոնավորության յեվ մի բարեկեցիկ մեծ գրադարանին անհրաժեշտ բոլոր դարակների, սանդուխների յեվ այլ ծախսեր»⁵:

1924 թ. դեկտեմբերին Բաքվի պոլիտեխնիկական իստիտուտի հայ ուսանողները առաջարկ են ներկայացնում ՀՕԿ-ին՝ Ադրբեջանի պոլիտեխնիկական ինստիտուտին կից գործող առևտրա-արդյունաբերական թանգարանի նմանությամբ ՀՍԽՀ ժողտնտխորհին կից առևտրա-արդյունաբերական թանգարան հիմնելու վերաբերյալ: Խնդրում էին՝ անհրաժեշտ նյութերը գնելու համար իրենց տրամադրել մոտ 1200 ռ. գումար, իսկ ֆիզիկական ուժի հետ կապված աշխատանքները առանց վարձատրության կատարելու էին իրենք⁶: 1925 թ. հունվարին ՀՕԿ-ի կենտրոնական վարչության և վերստուգիչ հանձնաժողովի խառը նիստը հավանության է արժանացնում առաջարկը և որոշում տրամադրել 1000 ռ. այն պայմանով, որ թանգարանը պետք է տեղափոխվի Հայաստան⁷:

ՀՕԿ-ը մասնակցել է նաև մեկ այլ թանգարանի կազմակերպմանը, որը կրել է «Անաստվածների թանգարան» անվանումը: 1931 թ. օգոստոսին այս թանգարանի կազմակերպման համար հատկացվել է 1000 ռ. գումար⁸:

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 156, թ. 1-3:

² Տե՛ս նույն տեղում, գ. 248, թ. 7:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 829, թ. 209:

⁴ Նույն տեղում, գ. 39, թ. 18:

⁵ Նույն տեղում, գ. 9, թ. 1 շրջերես:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 111, թ. 9-10:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 81, թ. 27 շրջերես:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 194, թ. 34:

ՀՕԿ-ը իր միջոցներով ձեռք է բերել և պատմության պետական թանգարանին հանձնել տարբեր նմուշներ: Այսպես, 1928 թ. թանգարանին են հանձնվում Լանսերեից գնված 170 ռ. արժողությամբ նկարներ¹, 1934 թ.՝ Ներսես Չամքերթենի միջոցով ձեռք բերված Վ. Մախոխյանի 2 նկարները («Ստեպ Ռյուս», «Կոտ Սյունտուազ»)², 1936 թ.՝ նկարիչ Ա. Ղարիբյանի ցուցահանդեսից գնված 4 նկարները («Արարատ», «Նոր Յերևան», «Հին Յերևան», Մ. Գորկու դիմանկարը)³, հին դրամներ⁴ և 12 անուն նմուշներ՝ ազգագրական բաժնին⁵:

1935 թ. ՀՕԿ-ը նախաձեռնում է մի հետաքրքիր ձեռնարկ՝ հիմնել «կուլտուրական-առողջապահական զբոսավայր»: Այդ նպատակով դիմում է Երևանի քաղաքային խորհրդի նախագահությանը՝ խնդրելով 10 տարի ժամկետով իր տրամադրության տակ դնել «Թոխմախան լիճը» իր շրջակայքով: Նախատեսվում էր «չորացնել լճի շրջապատի ճահիճները, հարթել դար ու փոսերը, մաքրել քարերից, լիճը մաքրել տիղմից, ջրային բույսերից և ափերը քարափել, տեղ-տեղ կառուցել նավամատույցներ նավակների համար, մեջտեղ շինել մի արհեստական կղզի, մոտի հին աշտարակը վերանորոգել և դարձնել փարոս: Լճի շրջապատը պատել բուսականությամբ, տնկել 3 շարք ծառուղիներ, տեղ-տեղ ծաղկանոցի հրապարակներ, իրանց շատրվաններով լիճը թափվող առվակը դարձնել ջրվեժ մի քանի կասկադով,-ասվում է քաղխորհրդին ուղղված գրության մեջ և ամփոփվում,- մի խոսքով աշխատենք այդ վայրը դարձնել մի օրինակելի զբոսավայր-պուրակ իր բոլոր հարմարություններով, վորը Խորհրդային Հայաստանում լինելու յե առաջինը կուլտուր-կրթական և առողջապահական տեսակետից»⁶:

ՀՕԿ-ը ակտիվ գործունեություն է ծավալել տպագրության ոլորտում՝ կազմակերպելով թե՛ սեփական տպագրական գործը, թե՛ հովանավորելով զանազան հրատարակչական ձեռնարկներ: 1925 թ. սկզբին ՀՕԿ-ը դիմում է ՀՍԽՀ Կենտգործկոմին՝ թույլտվություն խնդրելով սեփական պարբերականի, գեղարվեստական բացիկների ու ալբոմների, քարտեզների, գրքերի և այլնի տպագրության համար: Կենտգործկոմը իր համաձայնությունը տալիս է 1925 թ. փետրվարի 27-ին⁷: Գեղարվեստական հրատարակչությունների ղեկավարման և պարբերականի խմբագրման համար որոշվում է հրավիրել նկարիչ Տարագրոսին, որին շուտով փոխարինում է Գարեգին Լևոնյանը⁸: Թույլտվությունից անմիջապես հետո սկսվում են հրատարակվել վերը նշվածները և տարածվել ոչ միայն Հայաստանում, այլև սփյուռքահայության շրջանում, որտեղ այնքան մեծ պահանջարկ է առաջանում, որ ՀՕԿ-ի արտասահմանյան ձյուղերը կենտրոնին հայտ են ներկայացնում տպագրություններից մեծաքանակ օրինակներ իրենց ուղարկելու համար: Սա, անշուշտ, նպաստելու էր սփյուռքահայության շրջանում հայկական մշակույթի տարածմանը, և նրանց հայրենիքի հետ կապելուն, ինչպես նաև հրատարակչությունների միջոցով Հայաստանի գովերգումը հիմք էր ստեղծում նյութական ու մարդկային ավելի մեծ միջոցներ Հայաստան տեղափոխելու համար:

ՀՕԿ-ի ֆինանսավորմամբ տպվել են Վ. Թոթովենցի «Նոր Բյուզանդիոնը», Ս. Աբդալյանի «Հայաստանի արդյունաբերական հանքերը», Կ. Միքայելյանի «Հայ ժողովրդական հարստությունները արտասահմանում», Հ. Հակոբյանի «Խորհրդային Հայաստանը», «Ազգային Հարցը», Գ. Մահարու «Վերելք», «Յերգ վերադարձի», Ռ. Գասպարյանի «Լեռնային Ղարաբաղը խորհրդայնացման նախօրյակին», «Ղեպքերը Ղարաբաղում», Լեոյի «Թրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը», Պ. Աբելյանի «Խորհրդային Հայաստանի բնակչությունը», Ե. Լալայանի՝ Լոռու շրջանում հավաքած

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 104, թ. 1:

² Տե՛ս նույն տեղում, գ. 805, թ. 2-4:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 248, թ. 6:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 829, թ. 184:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 72:

⁶ Նույն տեղում, գ. 820, թ. 8:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 123, թ. 3:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 81, թ. 30-30 շրջերես:

հեքիաթները, Ռ. Դեմիրճյանի ֆելիետոնները, Ռ. Մելիքյանի կազմած ժողովրդական երգերը և բազում այլ աշխատանքներ¹:

1931 թ. հուլիսին պայմանագիր է կնքվում ՀՕԿ-ի կենտրոնական վարչության և պատմաբան Պ. Աբելյանի միջև, որով նախատեսվում էր, որ յուրաքանչյուր ամիս Պ. Աբելյանը գրելու և ՀՕԿ-ին է հանձնելու Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Անդրկովկասի և Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության և սոցիալ-մշակութային շինարարության մասին մեկ հոդված, որը տպագրվելու էր արտասահմանում հրատարակվող Խորհրդային մամուլում: Աշխատանքի դիմաց Աբելյանը ստանալու էր վարձատրություն²: Նույն թվականին ֆինանսավորվել են Վ. Թոթովենցը և Ա. Տեր-Ղևոնդյանը և ուղարկվել մասնակցելու Ձորագեսի հիդրոէլեկտրակայանի բացման արարողությանը³:

ՀՕԿ-ը աջակցություն է ցուցաբերել նաև կոնսերվատորիային, Պետական թատրոնին, կազմակերպել թատերական ներկայացումներ տարբեր վայրերում, Հայկինոյի հետ կնքել պայմանագրեր, որոնց համաձայն՝ պատրաստվում են «Նամուս», «Չար ոգի», «Խորհրդային Հայաստան»⁴ և ուրիշ կինոնկարներ և ցուցադրվում Խորհրդային Հայաստանում ու սփյուռքահայության շրջանում: Կազմակերպել է գիտական-երաժշտական երեկույթներ: Քայլեր է ձեռնարկել սփյուռքահայ արվեստագետներին ու արհեստավորներին Հայաստան տեղափոխելու ուղղությամբ:

ՀՕԿ-ը իր գործունեության բոլոր ժամանակափուլերում դրամական օժանդակություն է ցուցաբերել մշակույթի ոլորտում գործունեություն ծավալած անձանց՝ նրանց անձուկ սոցիալական վիճակը հաղթահարելու և մշակութային գործունեության շարունակմանը նպաստելու համար: Նման գործիչներից են Մարտիրոս Սարյանը, Լեոն, Ստեփան Կանայանը, Հովհաննես Թումանյանը, Կոստանդին Մելիք-Շահնազարյանը, Արշակ Հարությունյանը, Կրթանես Ախիկյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ալեքսանդր Աբելյանը, Ռոմանոս Մելիքյանը, Շողիկ Մկրտչյանը, Լեռ Կամսարը:

ՀՕԿ-ը աջակցություն է ցուցաբերել նաև գիտական ձեռնարկումների իրականացումներին: 1931 թ. գիտարշավ իրականացնելու համար միջոցներ են տրամադրվում պետական թանգարանին: Ձեռնարկի նպատակն էր հավաքել ազգագրական իրեր, կատարել կենցաղային հին պայմանների ուսումնասիրություն⁵: Երևան քաղաքում և գավառում հնագիտական և ազգագրական ուսումնասիրություններ կատարելու համար 1927 թ. Ե. Լալայանին տրամադրվում է 200 ռ. գումար⁶:

Ամբողջական պատկերացում կազմելու համար նշենք, որ ոչ բոլոր խնդրանքառաջարկություններն էին ՀՕԿ-ի կողմից ստանում օժանդակություն: Մի շարք դիմումներ (մանկապարտեզներին ու դպրոցներին օգնություն տրամադրելու, հրատարակություններ ֆինանսավորելու, անձանց օգնելու և այլնի վերաբերյալ) պարզապես մերժվում էին՝ ֆինանսական բավարար միջոցներ չլինելու պատճառաբանությամբ:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՕԿ-ը Հայաստանում ծավալել է կրթամշակութային բեղուն գործունեություն, նպաստել է ինչպես գրագիտության տարածմանը, այնպես էլ մշակույթի պահպանմանն ու զարգացմանը:

Эдуард Кесоян, Образовательно-культурная деятельность комитета помощи Армении в Армении,-В 1920-1930-ые годы для возрождения и оживления жизни в Армении, ХОК принялся не только за строительные работы, но и за построение образовательно-культурной жизни республики. Параллельно со строительством и восстановлением школьных зданий, ХОК уделял существенную материальную помощь

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 986, թ. 81-82:

² Տե՛ս նույն տեղում, գ. 196, թ. 210:

³ Տե՛ս նույն տեղում, գ. 194, թ. 13:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 149, թ. 17:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 196, թ. 17-21:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 149, թ. 21:

школам и университетам. Таким образом поддерживались различные культурные учреждения: публичная библиотека, театры, музеи и иные организации. Покровительством ХОК пользовались также многие научные и культурные деятели, с помощью которого опубликовались результаты их научной и художественной деятельности.

Были также недостатки, которые не могут затенить деятельность ХОК. Она, безусловно, заслуживает только благодарности.

Ключевые слова: цели ХОК (КПА), школьное строительство, материальная помощь школам и университетам, ХОК и культурные учреждения, ХОК и культурные деятели, типографическая деятельность.

Eduard Kesoyan, Cultural and educational activity of Armenian assistance committee in Armenia, -HOK betook itself to active construction works for reviving life in Armenia in 1920-1930-s. It included the construction of educational and cultural life. Parallely to construction and repair of school buildings HOK provided schools and universities with significant material aid. Various cultural institutions- public libraries, theatres, museums and other institutions- received material support. Scientific activities of many individuals were also supported by HOK, which published the results of those activities.

With the above mentioned positive there were also shortcomings, which, however, can not obscure the patriotic activities of HOK. Certainly, it deserves only gratitude and assessment.

Key words: aims of HOK (ACA), school construction, material support to schools and universities, HOK and cultural institutions, HOK and cultural persons, publishing activities.